



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԿՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

Թվական
Date

Դեկտեմբեր 8, 1997

ԴԲ

Սրբոց Յակոբեանց Պատրիարքութեան
Միաբանակից Եղբայրներուն.

Ի գիտութիւն Սուրբ Աթոռոյ Միաբան եղբայրներուն, կը յայտնեմք թէ Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, 1997 Նոյեմբեր 13 թուակիր մամակով կը տեղեկացնէր թէ առողջական պատճառներով, «շաբարախտ եւ արեան ճնշման բարձրացում, որոնց վատթարացումը յառաջ կուգայ յուզումով եւ մտահոգութիւններէ», կը հրաժարէր Լուսարարապետի պաշտօնէն եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Ուխտի անդամութենէն:

Տնօրէն ժողովի 20 Նոյեմբեր միստին մէջ մերկայացուցինք Լուսարարապետ Սրբազանի որոշումը, որ ինք եւս իր բացատրութիւնը տուաւ, յայտնելով որ Դեկտեմբեր 3-ին Ֆրանսա կը մեկնի, Լիոն հաստատուելու համար իր ընտանեկան պարագաներուն մօտ:

Դաւիթ Սրբազանի փափախն համաձայն, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին եւս յայտնեցինք իր որոշումը, թէ՛ «Դեկտեմբեր 3-էն սկսեալ դադրած կը մկատեմ ինկզբինքս Ս. Յակոբեանց Միաբանական Ուխտէն, քանի կը պատկանիմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Եպիսկոպոսական դասուն»:

Նոյնպէս տեղեկացուցինք Գեր. Տ. Գիւտ Արք. Նազգաշեանին, որուն թեմական սահմաններուն մէջ պիտի գտնուի, Լիոն մնակերով:

Դաւիթ Սրբազան Ս. Թորոսի Ձեռագրատան փոխանցումը կատարեց Նոյեմբեր 27-ին, մշակութային յանձնախումբի երեք անդամներուն (Սեւան Եպս. Դարիպեան, Ռազմիկ Վրդ. Պօռսեան, Բագրատ Արք. Պարթէեան), որոնք Պատրիարք Սրբազանին մերկայացուցին իրենց կատարած արձանագրութիւնը Մատնանքուն եւ իրենց ստանձնած բանալիները Ձեռագրատան:

Դեկտեմբեր 2-ին Դաւիթ Սրբազան Պատրիարք Սրբազանին յանձնեց Ս. Յակոբ Մայր Տաճարի եւ Ս. Միմասի բանալիները, ինչպէս նաեւ Լուսարարապետին յատուկ պանակէն:

Յաջորդ առաւօտ Դաւիթ Սրբազան մեկնեցաւ դէպի օդակայան, Ֆրանսական օդանավ թռիչք առնելու համար դէպի Բարիզ:

Իրեն կը մաղթենք կատարեալ առողջութիւն եւ «գործոց բարեաց յաջողութիւն»:

Տնօրէն ժողովի 4 Դեկտեմբեր 1997 բացառիկ միստին մէջ, հետեւեալ կարգադրութիւնները կատարուեցան—

1—Սուրբ Թորոսի Ձեռագրատան Առժամեայ Յանձնախումբի անդամ մշակութեցան, Սեւան Եպս. Դարիպեան, Բարսեղ Վրդ. Գալէմտարեան եւ Ռազմիկ Վրդ. Պօռսեան:

2—Ս. Յակոբի Մայր Տաճարի եւ Եկեղեցական արարողութեանց եւ Սուրբ Տեղեաց հսկողութեանց եւ Լուսարարապետի պարտականութեանց պատասխանատու մշակութեան է Գեր. Տ. Սեւան Եպս. Դարիպեան, ցնոր տնօրինութիւն:

3—Միաբանական Ուխտի կանոններու բարեփոխման համար Յանձնախումբ մը մշակութեցաւ, յանձնու չեղ. Տ. Գրիգոր Վրդ. Մազաւտեանի, Արթ. Տ. Արտէմ Ա. Քեմյ. Աշեանի, Նիւ Եօրթէն փաստաբան Վինսընթ Կորաքեանի, եւ Երուսաղիմաբնակ մեր Միաբաններէն Զ. Բագրատ Արք. Պարթէեանի եւ Զ. Ընծանուէր Բաբայանեանի:

4—Տնօրէն ժողովին յաջորդ միստին մկատի մկատի առնեմք Լուսարարապետի ընտրութեան հետ կապուած հարցերը եւ կարելիութիւնները:

Սիրոյ Ողջումիւ

Թորգոմ Արք. Մանուկեան

Թորգոմ Արք. Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի